ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Սահակ Հարությունյանը, Մարոզ Սարիբեկյանը, Միհրան Մելքումյանը, Մանուկ Հովհաննիսյանը, Պապին Վարդանյանը, Էդիկ Բաբախանյանը, Հակոբ Բաբայանը, Սեդրակ Սաֆարյանը, Սամվել Գարսեվանյանը:

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոզ Սարիբեկյանը:

Մարոզ Սարիբեկյանը նշեց,որՀամաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝օրենքի ուժով գումարված համայնքի ավագանու առաջին նիստը կվարի է Ակունք համայնքի նորընտիր ավագանու տարիքով ավագ անդամ Հարություն Սեդրակյանը և հրավիրեց պարոն Սեդրակյանին վարելու ավագանու նիստը:
Հ.Սեդրակյանը ներկայացրեց նորընտիր ավագանու անդամներին և շնորհավորեց նրանց: Նշեց, որ<<Ընտրական օրենսգիրք>>սահմանադրական օրենքի 142.2 հոդվածի 2-րդ մասի համաձայն2022թվականի սեպտեմբերի 25-ին Ակունք համայնքում համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով կայացած ընտրություններում 2708 ձայնով օրենքի ուժով Ակունք համայնքի ղեկավար է ընտրվել Հունան Պատվականի Ռուբենյանը և առաջարկեց, որ պարոն Հ.Ռուբենյանը զբաղեցնի տեղը նախագահությունում և վարի օրենքի ուժով գումարված ավագանու նիստը:
Համայնքի ղեկավար Հ.Ռուբենյանը նշեց,որ այս օրը՝ նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետությունում նշվում է Տեղական ինքնակառավարման մարմինների օրը և շնորհավորեց բոլորին տոնի կապակցությամբ:
Նիստի օրակարգը ներկայացնելու համար ձայնը տրվեց Մ.Սարիբեկյանին:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ2022ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՆԲԵՐԻ 10-Ի ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈԶ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասով,համայնքի ավագանին որոշում է՝
Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի նորընտիր ավագանու 2022 թվականի նոյեմբերի 10-ի օրենքի ուժով գումարված առաջին նիստի օրակարգը.
1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը սահմանելու մասին,
2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի նորընտիր ավագանու հերթական նստաշրջան գումարելու մասին:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92/

Լսեցին՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածի դրույթներով,համայնքի ավագանին որոշում է՝
1.Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ /

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով,համայնքի ավագանին որոշում է՝
1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի նորընտիր ավագանու հերթական նստաշրջան գումարել սույն թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդուման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94/

Նիստը նախագահող՝ Համայնքի ղեկավար Հ.Ռուբենյանը հայտարարեց, որ օրակարային հարցերը սպառվել են և նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ԱՐՏՅՈՄ ԱԶԻԶՅԱՆ .....

ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ .....

ԼԱՐԻՍԱ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ .....

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ .....

ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ .....

ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ .....

ԵՂԻԱԶԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ .....

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ .....

ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ .....

ԱՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ .....

ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ .....

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ .....

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ .....

ԳՈՌ ՍԱՖԱՐՅԱՆ .....

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ .....

Համայնքի ղեկավար՝ ..... ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ ..... Մարոզ Սարիբեկյանը